«ՄԱՐԶԱՅԻՆ 4900» ՍԱԿԱԳՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Մարզային 4900»-ը «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց համար նախատեսված GPON տեխնոլոգիայի միջոցով տրամադրվող «Մոնո» սակագնային փաթեթի սակագին է:

Աղյուսակ 1. Մարզային 4900 սակագնի գնացուցակ		
«Մարզային 4900» սակագին	**Արագություն**	**Ամսավճար**
«Մարզային 4900»	6 Մբ/վ	4900

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

1.1. Բաժանորդագրվելով «Մարզային 4900» սակագնային փաթեթին 1 տարով՝ Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել «Մարզային 4900» սակագնային փաթեթից:

Մեկ տարով բաժանորդագրության դեպքում Բաժանորդը ստանում է հետևյալ առավելությունները.

i. 100% զեղչ առաջին ամսվա ամսավճարի համար, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայություններն առաջին ամսվա ընթացքում տրամադրվում են առանց վճարի գանձման[1],

ii. Բաժանորդը ստանում է Աղյուսակ 2-ով սահմանված արագությունը Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:

Աղյուսակ 2. «Մոնո» սակագնային փաթեթի գնացուցակ

«Մոնո» սակագնային փաթեթ	**Արագություն** մեկ տարով բաժանորդագրության դեպքում	**Ամսավճար**
Մարզային	40 Մբ/վ	4900

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

iii. Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է «Մոնո» սակագնային փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց վճարի գանձման):

1.2. Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «Մարզային 4900» սակագնին 1 տարով բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման դեպքում (միակողմանի կամ երկկողմանի) Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

1.3. Եթե Բաժանորդը սույն պայմաններով սահմանված Ծառայությունների՝ 100% զեղչով տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» կամ «Դուո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է անվճար օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց անվճար տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է: Սույն կետում նշված ժամանակահատվածում «Սմարթ» կամ «Ֆիքսլայն» սակագնային փաթեթներին անցման դեպքում Բաժանորդը դադարում է Ծառայություններից օգտվել անվճար:

[1] Սույն կետի իմաստով անվճար ամիս է համարվում ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած մինչև հաջորդող ամսվա նույն օրը ընկած ժամանակահատվածը: Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար: Բաժանորդը ստանում է 100% (մեկ հարյուր) զեղչ առաջին 2 (երկու) ամսվա ամսավճարի համար, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայություններն առաջին 2 (երկու) ամսվա ընթացքում տրամադրվում են առանց վճարի գանձման: Սույն պայմանը տրամադրվում է բացառապես այն դեպքում, եթե վաճառքը կատարվում է Ակտիվ վաճառքի աշխատակցի կողմից, մնացած բոլոր ուղղություններով վաճառք կատարելիս սույն կետով սահմանված 2 (երկու) ամիս անվճար պայմանը չի տրամադրվում:

1.4. Գործող Բաժանորդը, Պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով «Մարզային 4900» սակագնին կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը «Մարզային 4900» սակագնային փաթեթի շրջանակում՝ ստանում է սույն պայմանների կետ 1.1.-ի **ii, iii** ենթակետերով սահմանված պայմանները:

1.5. Եթե Բաժանորդը ստացել է սույն պայմանների կետ **1.1.-ի ii ենթակետի Աղյուսակ 2-ում** սահմանված ինտերնետի արագությունը և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով Պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Մոնո» սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, «Տրիո» կամ «Դուո» ծառայությունների փաթեթների որևէ սակագնային փաթեթի, ապա շարունակում է օգտվել նախկին սակագնային փաթեթով/սակագնով սահմանված ինտերնետի հիմնական արագությանն ավելացված հավելյալ արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով/սակագնով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարի չափ է:

1.6. «Մարզային 4900» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների կետ **1.1.-ով** տրամադրվող առավելությունների ժամկետները:

1.7. «Մարզային 4900» սակագնին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրվա ընթացքում:

1.8. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է «Մարզային 4900» սակագնային փաթեթին մեկ տարով և Բաժանորդային պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝ Բաժանորդի գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: Ֆիզիկական անձանց համար- Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում:

2. Հնարավոր չէ բաժանորագրությունը «Մարզային 4900» սակագնին, եթե Բաժանորդի կողմից նշվող ծառայությունների մատուցման հասցեում նախկինում մատուցվել են ծառայություններ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից, և Բաժանորդային պայմանագիրը լուծվել է սույն պայմանների կիրառության մեջ մտնելուց հետո: